ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ՏԻԱՌ ՍՏԵՓԱՆ ՏԵՐ-ԱՅՎԱԶՅԱՆԻՆ «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» Ա ԿԱՐԳԻ ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՄԵԾԱՅԱՐԳ ՏԻԱՌ ՍՏԵՓԱՆ ՏԷՐ-ԱՅՎԱԶԵԱՆԻՆ, ՀԱՐԱԶԱՏ ՈՐԴՈՒՈՅ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՈՂՋՈՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Թուսան, Արիզոնա, ԱՄՆ

Ողորմածութեամբն Աստուծոյ ամենակալին շէն ու պայծառ է այսօր Ամենայն Հայոց Սուրբ Էջմիածինը, Աստուածակառոյց Վէմը հայ ժողովուրդի հոգևոր և ազգային գոյատևման:

Մեզի համար անհուն մխիթարութիւն է հաստատել թէ փոքր չէ թիւը այն ազգայիններուն, որոնք իրենց բարոյական ու նիւթական լայն աջակցութիւնը կը նուիրաբերեն՝ յառաւել շինութիւն և բարեզարդում Սրբութիւն Սրբոց Էջմիածնի:

Դուք, յարգարժան Տիար, հարազատ զաւակն էք մեր ժողովուրդին, որ երկար տարիներէ ի վեր Ձեր կեանքն ու գործունէութիւնը բարձրացուցած էք հայաշունչ առաքելութեան մը մակարդակին, իբրև հաւատարիմ զաւակը Հայաստանեայց Առաքելական մեր Եկեղեցւոյ և իբրև անբասիր անձնաւորութիւն մը նուիրուած հայ ազգային ոգեկանութեան պահպանման սուրբ գործին:

Մենք ջերմ գոհունակութեամբ կը հաստատենք Ձեր ինքնաբուխ նուիրատուութիւնները, մօտ յիսուն հազար տոլլարի, ի պայծառութիւն Մայր Աթոռիս:

Բարձր գնահատելով Ձեր ազգանուէր ու եկեղեցաշէն ծառայութիւնները,

սրտաբուխ նուիրատուութիւնները, այսու Մեր Հայրապետական կոնդակաւ Ձեզ կը պարգևատրենք Սուրբ Գրիգոր Լուսաւորչի Ա կարգի շքանշանով, մաղթելով, որ զայն կրէք բազում երկար տարիներ, քաջառողջութեամբ ու հոգեկան խաղաղութեամբ:

Թող բարին Աստուած ի կատար ածէ Ձեր բոլոր հայանուէր ազնիւ իղձերը:

«Ողջ լերուք զօրացեալ Սուրբ Հոգւով և յաւէտ օրհնեալ ի Տեառնէ և ի Մէնջ». ամէն:

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 10 յունուարի
1979 Փրկչական ամի,
եւ ի տումարիս Հայոց ՌՆԻԸ
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ՀՄՐ. 940